

Մ Ի Բ Ի Կ Ի Ս Պ Ի Տ Ա Կ Ծ Ո Վ Ո Ւ Ն .

(Ի ՔԵՐԹՈՒԱԾՈՅՆ « ՊԵՏՐՈՍ ՄԵԾ ») .

Ահա փրփրադէզ եռայ Պիսիգոն հանդէպ Պետրոսի
եւ մըռնչելով տեղի տան նորուն առաջի ալիք :

.
Ծածկեցան յաչաց կուտակ կոհակօք մայրիք բացական , —
եւ շուրջանակի երկինք ընդ ծովու լոկ նըշմարին կից :
Անդ ուժգին հողմունք ի բռին ունեւելով ըզնաւուց տորմիզ
Որ կորըստական մընայր արկածից յամենայն կողմանց ,
Ընդ մուտս արեւու եւ ընդ ելս նորին , հիւսիս եւ հարաւ
Դիմեն մըրըրկեն ըզխիտ մառախուղ , զալիս եւ զաւազ :
Շանթիք պատառեալ ըզթանձր աղջամուղջ արձակեն ըզփայլ ,
Բոմբիւնք որոտմանց ընդ ջուրցն ճողփին խառնեալ ժըխորին ,
Քակեցան ընդ մէջ օդոց եւ ծովուն անջըրպետ սահմանք ,
Ընդառաջ թըռչէր անձրեւաց անձրեւ յեռանդուն ալեաց ,
Արհաւիրս ի սիրտ ազգէին սարիք ահեղ ճըռնչմամբ :
Իսկ դիւցազնին մեր կացեալ անխըռով ի մեծ վըտանգին
Խրախոյս արկանէր ահաբեկ մարդկանն աչօք եւ բանիւք ,
Ընդ ըսպառնալից տարերց հեծութիւնս ձայնէր առ նոսին ,
Հապա քաջ լերուք

.
Ես ի տրամ երկրի կամ եւ սասանիմ սարսեալ երկիւղիւ ,
Կարծեմ թէ անդէն լինիմ խորասոյզ յալիս մոլեգին ,
Մէն մի գըղընդեր ինձ լեռնահանգոյն թըլի ամբարտակ ,
Որ մըռնչելով անկեալ խորտակի զգըլխով Պետրոսի . . .
Սակայն Տեսչութիւն ի խորս անդընդոց զաջ իւր կարկառէ ,
Եւ մըրըրկին ուժգին ի ծանրը շըղթայս իսկոյն կաշկանդի :
Իբր ի դաշտ աղատ ամեհին սուրայ վազիւք երիվար ,
Խըրխինջ արձակեալ շընչէ եւ տրտիմամբ հող ի դափր հանէ ,
Սակայն բարձրաբերձ լերանց ի սահմանս այն ինչ ժամանեալ ,
Զոգի կըլանէ՝ կասեալ ի վազից անձամբ քըրտնաթոր ,
Այսպէս եւ հիւսիս զիջեալ հոսկ ուրեմն անկաւ շընչասպառ ,
Ընդ խոնջ մըրկանունս տարածեալ սըփուէր Պոնտոս ըզփըրփուր ,
Ամպը հալածեցան , եւ ընդ կապուտակ օդս ի հարաւ կոյս
Երկակի բըլուրք ելին յերեւան եւ ծառուտ ափունք ,
Եւ ընդ մէջ նոցին բացաւ տորմըղին մուտ ի հանգըրուան
Որ ի յարածուփ ջուրցն էր նաւորգաց անքոյթ ապաստան ,
Ուր ի ջըրարբին պըտուակեալ ափունս աըխրատիպն Ունա ,
Ի Պոսիգոնին ցանդ դանդաղաքայլ ի գիրկս լնթանայ :